Բովանդ.-ից՝ 5. 236ա - 42ա. Խրատ վասն խոնարհութեան, ասացեալ սուրբ վարդապետին Անանիայի Շիրակացոյ - էջ 453 - 453; 6. 258բ - 9Բ. Յաղագս ընթացից արեգական եւ համարոյ չափոց; Խառն կերպով ընդգրկում է Անանիայի Շիրակացու «Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռորդաց»-ի գրեթէ ամբողջ միւթը. - էջ 881-882; 2. 3Բ; [Անանիայի Շիրակունոյ համարողի խոստումն աշակերտացն] 943; Ե. 170ա - 2ա [Ի բանից Անանիայի Շիրակունոյ] - էջ 966 3 – 77բ - 8ա Մղոնահամարք ճանապարհաց ընդհանուր (Անանիայի Շիրակացոյ – Ի Դըւնոյ մղոն Մ (200) ի Կարնոյ քաղաքս - էջ 1037-1032; Թ. 188ա - 9ա [Քաղուածք ի բանից Անանիայի Շիրակացոյ եւ այլոց] – էջ 1071; 6. 159ա - 60ա Անանիա Շիրակացու հանելուկ էջ 1142; Ժ. 1. 348բ - 53բ. Անանիայի [Շիրակացոյ] խոստումն աշակերտացն եւ առաջին գլուխ - էջ 1144-1145:

2012

58. Անանիա Շիրակացի: (Հոդվածների ժողովածու) / Խմբ.՝ Հրավարդ Հակոբյան. - Ե.: Լուսակն, 2012. – 138 էջ:

Բովանդ.-ից՝ Նախաբան; Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը / Աելիտա Դոլուխանյան; Անանիա Շիրակացու «Հայտնության» և «Զատկի» ճառերը / Պարույր Սահակյան; Անանիա Շիրակացու խնդիր-հանելուկները / Լիլիթ Հովսեփյան; Հավելված; Ինքնակենսագրություն: Խոսք երիցս երանելի ուսուցիչ Անանիա Շիրակացու՝ իր կյանքի որպիսության մասին; Հայտնության ճառը; Մաթեմատիկոս Անանիա Շիրակացու աշխատություն մեր տիրոջ և փրկչի հայտնության առթիվ; Զատկի ճառը: Անանիա Շիրակացու տիրոջ Զատկին նվիրված տոմարական աշխատությունը; Թվաբանական խնդիրներ; Առաջին խնդիր; Երկրորդ խնդիր; Ութերորդ խնդիր, Տասներորդ խնդիր, Քսաներորդ խնդիր; Քսանմեկերորդ խնդիր; Քսաներեքերորդ խնդիր; Խրախճանականք; [Անանիա Շիրակայնող համարողի] [Խրախճանականք]; Խրախճանական առաջին; Խրախճանական երկրորդ; Խրախճանական երրորդ; Խրախճանական չորրորդ; Խրախճանական վեցերորդ; Խրախճանականներ; Հինգերորդ խրախճանական; Վեցերորդ խրախճանական; Գրիգոր Մագիստրոսի նամակն ուղղված Պետրոս Գետադարձ կաթողիկոսին:

**ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ**

1853

59. Անանիա Շիրակացի

Անանիայի Շիրականույ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման // Բազմավէպ. – Վենետիկ, 1853. – ք. 21. - էջ 335. - (ուսումնական. – թուաբանութիւն); - ք. 3. - էջ 48. – ք. 9. էջ 144. - (Ձուարճալիք. – թուաբանական):

1854

60. Անանիա Շիրակացի

Անանիայի Շիրականույ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման // Բազմավէպ. – Վենետիկ, 1854. – ք. 10. - էջ 160; ք.16. - էջ 256. (Ձուարճալիք. – թուաբանական):

1855

61. Անանիա Շիրակացի

Անանիայի Շիրականույ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման // Բազմավէպ. – Վենետիկ, 1855. – ք. 19. - էջ 304. - (թուաբանական):

1866

62. Հարցմունք թուաբանականք [Նաև՝ Անանիա Շիրակացին Տրապիզոնում հուլյն հռչակավոր գիտնական Տյուքիկոսի մոտ սովորելու և աշխատությունների (Երկասիրությունների՝ Յաղագս երկնի; Յաղագս չափոյ և կշռոյ; Յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման) մասին] // Սիօն. - Երուսաղէմ, 1866. – ք. 5. - էջ 77. - (Ուսումնական):

63. Անանիա Շիրակացի: Հարցմունք թուաբանականք // Սիօն. - Երուսաղէմ, 1866. – ք. 5. - էջ 78; ք.6. - էջ 94; ք.7. - էջ 108-109; ք. 10. - էջ 157-158; ք. 11. - էջ 174-175. - (Ուսումնականք):

1877

64. Մանդինեան Ա.

[1877թ. Ա.Պետերբուրգում Բ.Պատկանյանի թարգմանած, «բազմակողմանի հետաքրքրական ծանօթութիւններով հրատարակած «Անանիայի Շիրակունիոյ մնացորդք բանից» և «Աշխարհացոյց Է դարու» աշխատութիւնների մասին»] // Փորձ. – Թիֆլիս, 1877. – ք.4 - էջ 317 – 370. - (Մատենախօսութիւն):

1891

65. Թորոսեան Յովհ. Վ.

Անանիա Շիրակացի: [Կյանքը և գործը] // Թորոսեան Յովհ. Ընտիր Զայկագունք: 2-րդ տպագր.: - Վենետիկ, 1891. - էջ 289-294:

1892

66. [Տէր-Սկրտչեան Գալուստ]

[Անանիա Նարեկացու «Երանելոյ հաիր Անանիայի գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծացն որ վասն նորա» թուղթը սխալմամբ Անանիա Շիրակացուն վերագրելու մասին] / Սիաբան. // Արարատ. – Թիֆլիս, 1892. – ք. Ա. - էջ 1-18:

1896

67. Ալիշան Ղեւոնդ

Ա. Յեղանակ Ռուբինեանց ժամանակ; Ա. Առաջին ծանօթութիւնք եւ զուգադիպութիւնք հայոց եւ Վենետայ // Ալիշան Ղեւոնդ. Զայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ Վենետայ ի ԺԳ - Դ եւ ԺԵ - Զ դարս.- Վենետիկ, 1896. - էջ. – 1-19: Նաև՝ ավանդագրույց ջրից ոսկի ստանալու գաղտնիքը Անանիա Շիրակացին իմանալու և ուրիշների չհայտնելու պայմանով Վենետիկի տիրակալից խնդրանք դրամի մի երեսին իր պատկերը դնելու վերաբերյալ:

68. Դիտողութիւն մի: [«Արարատ»-ի փետրվար ամսվա մեջ տեղ գտած Անանիա Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանաց»- ի որոշ կետերի բացատրության անհրաժեշտության մասին] // Բազմավէպ. – Վե-

Գետիկ, 1896. - յուճիս. - էջ 251:

69. Դուրեան Ե.Վ.

Շիրակացիին երազը // Արձագանք. – Թիֆլիս,- 1896. – ք. 79. – յուճիսի 12. - էջ 3. 4. - (բանասիրական); Մասիս. – Կ.Պոլիս. – ք. 4. – 22 յուճիսի. - էջ 99-104:

70. Թորոսեան Յովի. Վ.

Անանիա Շիրակացի եւ Արարատ թերթին մէկ յաւելուածը // Բազմավէպ. – Վեներտիկ, 1896. – մայիս. - էջ 214 –մ 221. - (Մատենախօսական):

71. Տէր Սկրտչեան Գալուստ

Անանիա Շիրակացի // Արարատ. - Էջմիածին, 1896. – ք. 2. էջ 96-104, ք. 3. - էջ 143-152, ք. 4. - էջ 199-208, ք. 5. - էջ 292-296, ք. 6. - էջ 336-344:

Բովանդ.-ից` Յաղագս ամպոց եւ նշանաց; Յաղագս հարցման եւ լուծման; Անանիայի յաղագս կատարման հարմարողութեանն եւ կերպից հարցման; Յաղագս շրջագայութեան երկնից` թե որպէս իմաստասիրացն թուեցաւ. Անանիայի Շիրակացւոյ ասացեալ:

1897

72. [Անանիա Շիրակացի: Պրոֆ. Կոնիքիրը կը հրատարակէ ի թերթին Byz Zeitsch. 1987, էջ 572, Անանիա Շիրակացւոյ (է դարուն) 1. ինքնակենսագրութիւնը եւ: 2. ճառ ի Չատիկ Տեառն, անգլիերէն թարգմանութեամբ] // Յանդէս ամսօրեայ. – էջ 317. – Վիեննա, 1897. – ք. 10. - էջ 317.- (Այլեւայլք. – նորութիւններ):

73. Անանիա Շիրակացի: Անանիայի Շիրակայնոյ Յամարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ փրկչին մերոյն ճառը անցեալ տարի նոյ-ին պը. Կոնիքիր անգլիերէն թարգմանութեամբ հրատարակեց “The Expositor” թերթին մէջ կենսագրական յառաջաբանով եւ ծանօթութեամբ] // Յանդէս ամսօրեայ. – Վիեննա, 1897. – ք. 1. - էջ 26. - (Այլեւայլք նորութիւններ):

74. Զարպիանալեան Գարեգին

Անանիա Շիրակացի // Ջարպիհանալեան Գարեգին. Հայկական հին դպրութեան պատմութիւն: (Դ - ԺԳ դար); Բարձր. դպր. համար: 3-րդ տպագր. – Վենետիկ: Տպ. Մխիթարեան, 1897. - էջ 456 – 465:

Բովանդ.-ից` Անանիա Շիրակացի; Իր վարքը; Անանիայի գրուածները; Աստղաբաշխութիւն; Շիրակունոյն աստղաբաշխական կարծիք և դրութիւն; Ազգին մեջ ունեցած յարգը իր գրուածոց; Ժամանակագրութիւն; Յաղագս կշռոյ և չափուց; Անհարազատ և անծան գրուածք Անանիայի անուամբ; Ազգային պատմչաց թուոյն մէջ յիշուիլը; Իր անձը:

1901

75. Ալիշան Ղեւոնդ

Անանիա Շիրակացի: [VII դար: մաթեմատիկոս] // Ալիշան Ղևոնդ. Հայապատում Պատմիչք եւ պատմութիւնք հայոց; Մաս I - Վենետիկ; 1901. - էջ 167-168:

76. Ալիշան Ղեւոնդ

Անանիայի Շիրակունացոյ ու վասն որպիսութեան կենացն. «Ես Անանիա Շիրակունացի, որ բովանդակեցի ...» // Ալիշան Ղևոնդ. Հայապատում: Մաս Բ. – Վենետիկ, 1901. - էջ 232-233:

77. Խաչկոնց Դ.

Հայոց կրօնական բանաստեղծութիւն [նաև` հայ հին մատենագրութեան պատմութեան մէջ «համարողական ու թուաբանական գիտութեան հետամուտ, հայոց մեջ առաջին աստղագիտութեան, իմաստասիրական ու ուսումնական գիտութեանց մեջ եզակի դեմք մը»` Անանիա Շիրակացին, «Է դարու Շարականագիրներէն» մեկը հանդիսանալու մասին] Լոււնայ. – Թիֆլիս. – 1901 Գիրք Բ. - էջ 305-368:

1903

78. Մ.Խորենացոյ պատմութեան ժամանակի մասին [Նաև` Ս.Ղազարի Մատենադարանի ճառընտիրի մէջ` Անանիա Շիրակացու ծննդւան և Ջատկի ճառերի, «Քրօնիկոն» աշխատութիւնը Անաստաս կաթողիկոսի պահանջով գրվելու, Ասողիկը ժամանակագրական շատ տեղեկութիւններ Շիրակացուց վերցնելու մասին] // Հանդէս ամսօրեայ. – Վիեննա, 1903. – թ. 1. էջ 30-32; Թ. 2. - էջ 34-36:

1904

79. Խալաթեանց Գր.

«Յայոց հաստատութեան ժամանակի» առիթով: [Անանիա Շիրակացու տոմարագիտական բովանդակությամբ «Զատկի ճառ»-ի մասին] // Յաւդէս ամսօրեայ – Վիեննա, 1904. – ք.5 - էջ 156-157:

80. Խալաթեանց Գրիգոր

Յիպպողիտեայ ժամանակագրութեան հայ թարգմանութեան վրայ; [Նաև՝ «Յամբաւաւոր գիտուն ուսողագէտն ու աստղաբաշխը՝ Անանիա Շիրակացին Յիպպողիտեայ ժամանակագրութեան հետ» չիամաձայնվելու մասին] // Յանդէս ամսօրեայ. – Վիեննա, 1904. – ք. 1-2. էջ 46-48:

1905

81. Սահակեան Դ. Կ. Տ.

Դիտողութիւններ [Նաև՝ Անանիա Շիրակացու «Կարթ ծիրանագոլ» խոսքը Դ.Դ.Վ. Ալիշանի «Յին հաւատք Յայոց»-ի մեջ հիշատակվելու մասին] // Բազմավէպ. Վենետիկ, 1905. – Թ. 11. - էջ 512-513. - (Յայրենագիտական):

1908

82. Ֆերհարեան Ե. Պետրոս

Անանիա Շիրակացոյ անտիպ էջերէն: (Կը հրատարակենք « Անանիայի Շիրակունւոյ համարողի թիւք որչափութեան տանց Յին Կտակարանաց» եւ «Նորին թիւք որչափութեանց Նոր Կտակարանաց») // Յանդէս ամսօրեայ. – Վիեննա, 1908. – ք. 1, էջ 20-23:

1911

83. Կիւլէսէրեան Բաբգէն վարդապետ

Յայ տղու առաջին դասագիրքը [Պյութագորասի համարողական արվեստը գնահատող, հայ մատենագիտության մեջ «Իբր թուագէտ և չափագէտ միակ դէմքը» հանդիսացող Անանիա Շիրակացին «Քերական» կոչվող դասագրքի հեղինակ ճանաչվելու մասին] // Անահիտ. – Փարիզ, 1911. – Թ.1-2 էջ 72-76:

1914

84. Չամիհեան Արահամ

Անանիա Շիրակացի: Գիտական// Չամիհեան Արր. Հայ գրականության պատմություն: Մաս Ա. – Նոր-Նախիջևան, 1914.- էջ 119-124:

Բովանդ.-ից` Կեռանքը; Գործերը; Յաղագս հարցման եւ լուծման: [Թվաբանական ժողովածուի մասին]; Յաղագս շրջագայության երկնից; [Տեղեկություններ տիեզերքի կազմության մասին]; Յաղագս ամպոց եւ նշանաց; [Բնության նշանների, կենդանիների բնագրական շարժումների մասին]; Յաղագս երկնի; Յաղագս կշռոց եւ չափուց; Ժամանակագրություն:

1926

85. Մանանդյան Յ.

Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները // Հանդես ամսօրեայ. – Վիեննա, 1926. – ք. 9-10, էջ 438-445:

Բովանդ.-ից` Անանիա Շիրակացին օգտուել է Արիստոտելեան իմաստասիրության հնագույն հայ թարգմանություններից:

1927

86. Մանանդյան Հակոբ

Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության: Շիրակացու կշիռները յեվ «պայուսասիկ»-ը [«Յաղագս կշռոց և չափոց» գրվածքի մեջ]; «Ապուռիշի» [բառի բացատրությունը]; «Չրփաքար», «չրփայքար»; «Դահեկան»-ը Շիրակացու թվաբանական խնդիրների մեջ; «Ասարիոն» յեվ «սապարիոն» // Տեղեկագիր / ՀԽՍՀ Գիտութ. յեվ Արվեստի ինստիտուտի. - Ե., 1927. – ք. 2. - էջ 29-42:

1928

87. Մանանդյան Յ.

Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները [Նաև` ըստ Գալուստ Տեր Մկրտչյանի «Անանիա Շիրակացի» ուսումնասիրության. թարգմանությունը Շիրակացուն չպատկանելու, «Յաղագս շրջագայության երկնից» աշխատության համար գլխավոր աղբյուր հանդիսանալու մասին] // Հանդես ամսօրեայ. – Վիեննա, 1928. – ք. 1.- էջ 25-30:

Բովանդ.-ից` Արիստոտելի «Պատմություն յաղագս աշխարհի» գրվածքի

հայերեն թարգմանութեան ժամանակաշրջանը:

88. Մանանդյան Հակոբ

Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության (II) [Նաև՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» հիշատակված «ոսկեդահեկան»-ի կշիռը Անանիա Շիրակացու մոտ որպես բյուզանդական «դահեկան»-ի կշիռ ներկայացվելու մասին] // Հ.Խ.Ս.Հ. Պետ. Համալս. գիտ. տեղեկագիր. – 1928. – թ. 4. - էջ 43 – 82:

Ամփոփ.՝ ռուս.:

Բովանդ.-ից՝ «Պօտատ» = Botaniates, վրց. potonat, patinat.

1930

89. Ակինեան Կ. Ն.

Մովսէս Խորենացույ ողբը Ղեւոնդ Երեցի պատմութեան վերջաբանն է [Նաև՝ Անանիա Շիրակացու «Առ խոստացեալսն» գրուածքէն] ընդարձակ հատված տեղ գտնելու մասին] // Հանդէս ամսօրեայ. – Վիեննա, 1930. – թ. 1, 2. - էջ 8-41:

1931

90. Բահաթրյան Բ.

«Հին եգիպտական» Անանիա Շիրակացու և ժողովրդական հաշվումների ու խնդիրների մանությունը // Տեղեկագիր / ՀՍԽՀ Գիտ. ինստ. – 1931. – թ. 1. - էջ 249-263:

1932

91. Անանիկեան Ս. Յ.

Նարեկացին և Նարեկը: [Արևմուտքի հետ ունեցած հոգևոր կապի մասին նաև՝ Անանիա Շիրակացու աստղագիտության վկայությունը] // Անանիկյան Ս.Յ. Քննական ուսումնասիրություններ, - Նյու-Յորք, 1932. - էջ 120-152:

1933

92. Աղանունի Սկրտիչ եպս.

Անանիա Շիրակացիին Յաղագս կատարման համարողութեան եւ կերպից հարցման գործին տպագրութիւնը Ս.Աթոռոյ մէջ // Սիրն. - Երուսաղէմ, 1933. – ք. 1. - էջ 380-381. (Նախնիք):

93. Գետնաչափութիւն, մաս, մղոն, ասպարէզ (արադիոն) հին հայկական աղբիւ[ր]ներու համաձայն: Նպաստ մը աշխարհագրութեան ու յոյն եւ հայ քաղաքակրթական յարաբերութիւններու պատմութեան [Յանն Ֆոն Սթիկի ուսումնասիրությունը Մովսէս Խորենացու «Աշխարհացոյց»- ի նվիրվելու և Անանիա Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական» գրվածքը հունական աղբյուրներին մոտ լինելու մասին] // Յանդէս անսօրեայ. – Վիեննա, 1933. – ք. 3-6, էջ 281 - 282; ք. 7-8, էջ 511 – 512; ք. 9-10, էջ 583-588

1934

94. Մանանդյան Հակոբ

Երատոսթենեսի ստադիոնը յեվ պարսից ասպարեսը / ՀՍԽՀ Լուսժողովմատ. - Ե.: Հրատ. Մելքոնյան ֆոնդի, 1934. - 66 էջ:

Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Յանն Ֆոն Սթիկի կարծիքը: Նաև՝ Անանիա Շիրակացուն վերագրված աշխատությունների մասին:

1937

95. Ակիճեան Հ.Ն.

Եւկլիդէայ տարերք երկրաչափութեան հայ մատենագրութեան մէջ [Նաև՝ հունարեն բնագրից Անանիա Շիրակացու ուսուցիչ Տյուքիկոսի կողմից արված թարգմանության մասին] // Յանդէս անսօրեայ.- Վիեննա, 1937.- ք. 6-8.- էջ 226-242:

96. Քասունի Եղիա Ս.

Անանիա Շիրակացի մեծ դաստիարակը // Հայաստանի կոչնակ. – Նյու Յորք, - 1937. – ք. 28. – 10 յուլիսի. - էջ 672-674; ք. 29. – 17 յուլիսի. - էջ 696-698:

1939

97. Աբրահամյան Աշ.

7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը // Գիտ. աշխատություններ / Յերևանի պետ. համալս. – 1939. – հտ. XI. - էջ 245-274:

98. Աբրահամյան Աշ.

Շիրակացու աշխատությունների նոր ընդորինակությունները // Գրական թերթ. - Ե., 1939. – ք.1 – հունվ. - էջ 3:

99. Անանիա Շիրակացի

Անանիայի խոստումն աշակերտացն և առաջին գլուխ // Գիտ. աշխատ. / Յերևանի Պետ. համալս. – 1939. – հտ. XI. - էջ 249-269:

100. Անանիա Շիրակացի: Անանիայի յաղագս կատա(ր)ման համարողութեանն և կերպից հարցմանն // Գիտ. աշխատ. / Յերևանի Պետ. համալս. – 1939. – հտ. XI. - էջ 269-274:

1940

101. Աբրահամյան Աշ.

Շիրակացու թվաբանության դասագիրքը: // «Խորհրդ. մանկավարժ». Ե., 1940. – ք. 2. էջ 83-88:

102. Մովսիսյան Ա.

Անանիա Շիրակացին որպես մանկավարժ // «Սովետ. մանկավարժ». Ե., 1940. - ք. 11. - էջ 96-103:

103. Մովսիսյան Աբ.

Հայագիր ժողովրդական դպրոցների ծագումը // Գիտ. աշխատ. / Յերևանի Պետ. համալս. – 1940. – հտ. XIII.- էջ 363-464:

Բովանդ.-ից` Այդ դպրոցների բովանդակությունը [Եան` Անանիա Շիրակացու այբբենարանի առաջին հեղինակ լինելու վերաբերյալ Բ. Բ. Գյուլեսերյանի արտահայտած կարծիքի անհավանականության մասին]:

104. Մովսիսյան Աբ.

Վանական տարրական յեվ բարձր տիպի դպրոցները [Եան` Անա-

նիա Շիրակացու՝ ուսուցիչ, դաստիարակ և դասագիրք կազմող լինելու հանգամանքի մասին] // Գիտ. աշխատ. / Յերևանի Պետ. համալս. – 1940. – հտ. XIII. - էջ 403-420:

1941

105. Հայրապետյան Ա.

Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը: // Գիտական նյութերի ժողովածու / Մատենադարան.- 1941.- թ. 1.- էջ 1-17:

Բովանդ.-ից՝ Անանիա Շիրակացու աշխատությունները:

1944

106. Աբեղյան Մանուկ

Անանիա Շիրակացի: Ինքնակենսագրությունը; Երկերը: «Անանիայի Շիրակայնույ համարողի ասացեալ ի յայտնութիւն տեառն և փրկիչին մերոյ»; Անանիայի Շիրակայնույ Համարողի ասացեալ ի զատիկն տեառն»; «Անանիայի Շիրակայնույ Համարողի յաղագս կշռոց և չափուց»; «Յաղագս հարցման և լուծման»; «Անանիայի Շիրակայնույ Համարողի առ խոստացեալն»; «Աշխարհացոյց»; Անանիայի տիեզերական տեսությունը; Անանիայի երկերի գրական և կուլտուրական արժեքը // Աբեղյան Մանուկ. Հայոց հին գրականության պատմություն: Հտ. 1. Ե., 1944. - էջ 373-387:

1946

107. Աբեղյան Մանուկ

Վերածնությունը հայոց հին գրականության մեջ: [Եան՝ Անանիա Շիրակացու կարծիքի մասին] // Աբեղյան Մանուկ. Հայոց հին գրականության պատմություն: Հտ.2. - Ե., 1946. - էջ 570-572:

108. Աբրահամյան Աշ.

Հայ կուլտուրայի գանձարանը [Եան՝ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար», «Մատենագրություն» աշխատությունները և մի քանի մանր տեքստեր Մատենադարանի կողմից հրատարակվելու մասին] // Էջմիածին. – 1946. - ապրիլ-մայիս. - էջ 25-32, լուսանկ.:

109. Պետրոսյան Գ. Բ.

Անանիա Շիրակացու թվաբանական դասագիրքը և նրա նշանակությունը նաթեմատիկայի պատմության համար // Տեղեկագիր: Հաս. գիտ. / Հայկ. ՍՍՌ Գիտ. Ակադեմիա. – 1946. – թ. 11-12. – էջ 19-45. – անփոփ. ռուս, անգլ.:

110. Պետրոսյան Գ. Բ.

Հովհաննես Սարկավազի «Անկլինալոր թուեր»-ը [Անանիա Շիրակացուն վերագրելու հարցի շուրջ Թ. Հ. Թումանյանի և Ա. Գ. Աբրահամյանի արտահայտած տեսակետների, նրան չպատկանելու, 1084թ. Սարկավազ վարդապետի՝ անշարժ տոմար մշակելու և հաստատելու հարցում Շիրակացուց օգտվելու մասին] // Տեղեկագիր: Հաս.գիտ. / ՀՍՍՌ ԳԱ.- 1946.- թ. 4.- էջ 23-29:

111. Պետրոսյան Գ. Բ.

Հովհաննես Սարկավազի «Անկլինալոր թուեր»-ի աղյուսակների բովանդակությունը և օգտագործված հավանական աղբյուրները. [Եան՝ Անանիա Շիրակացու տոմարական, աստղաբաշխական ու թվաբանական աշխատություններից օգտվելու մասին] // Տեղեկագիր: Հաս. գիտ. / ՀՍՍՌ ԳԱ.- 1946.- թ. 4.- էջ 29-41: Անփոփ.՝ ռուս., անգլ.:

1947

112. Աբրահամյան Աշ.

Շիրակացու աշխատությունների հարազատության հարցի շուրջը: [Ի պատասխան՝ Ա. Աբրահամյանի «Անանիա Շիրակացու մատենագրությունը» գրքի վերաբերյալ «Տեղեկագիր» 1947թ. թ.3-ում տպագրված Լ.Սեմյոնովի գրախոսությանը] // Տեղեկագիր: Հաս.գիտ. / ՀՍՍՌ ԳԱ. – 1947. – թ. 6. – էջ 87-91:

113. Անանիա Շիրակացի: [Ստեղծագործական ուղին] / Յ.Ե.Ս. // Ջարթօնք. - Բեյրութ, 1947. – թ. 212. – 1 օգոստ. - էջ 2:

114. Պարսունյան Պ.

Անանիա Շիրակացի // Ջարթօնք. - Բեյրութ. – 1947. – 1 օգոստ. – թ. 212. - էջ 2 – (Մեր հին փառքերեն):

115. Սեբուլայ Յ. Օ.

Նոր Կտակարանի գրքերու կարգը հայոց քոլ [Նան՝ Անանիա Շիրակացու «Թիւք որչափութեան տանց Յին ու Նոր Կտակարանաց» աշխատության մասին] // Հանդէս ամսօրեայ. – Վիեննա. – 1947. – ք. 3. – էջ 179-190:

1948

116. Աբրահամյան Աշ.

Ռուս ժողովուրդը և Մոսկվան միջնադարյան հայ մատենագրության մեջ [Նան՝ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»- ուն սլավոնների մասին՝ համառոտ և ընդարձակ խմբագրություններով, հիշատակվելու մասին] // Գիտ. աշխատ. / Երևանի Պետ. համալս. – 1948. – հտ. XXVII, - էջ 211-235:

1950

117. Ակինեան Հ. Ն.

Եղիշէ եւ Անանիա Շիրակացի [Եղիշէ վարդապետ Կողբացին Անանիա Շիրակացու «Առ խոստացեալսն» գրուածքին ծանոթ լինելու և նրան աշակերտելու հավանականության մասին] // Հանդէս ամսօրեայ. – Վիեննա. – 1950. – ք. 10 – 12. - էջ 385-422:

1951

118. Մուրադյան Գուրգեն

Գրիգոր Մագիստրոսի թղթերը: (Մի գլուխ ավարտական շարադրությունից) [Նան՝ Անանիա Շիրակացու «Քրոնիկոն»-ի մասին] // Էջմիածին. – 1951. – ք. 11 – 12.- էջ 53-55:

119. Սեմյոնով Լ.

Սարկավագադիր տոմարը: [Նան՝ Անանիա Շիրակացու դերը տոմարագիտության մեջ] // Էջմիածին. – 1951. – ք. 1-3. - էջ 46-49:

1951

120. Աբրահամյան Աշ.

Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատու-

թյունը [Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն և տոմար»-ից օգտվելով՝ «Մեկնութիւն տոմարի» վերնագրով աշխատություն ստեղծելու մասին] // Էջմիածին. – 1952. – հունվար. - էջ 30-36; փետրվար. - էջ 34-48:

1953

121. Մանանդյան Դ.

Միջօրեագծի և երկրի մակերեսի աստիճանական չափումները ըստ հին հայկական աղբյուրների [«...Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց»- ը Անանիա Շիրակացու գրչին չապատկանելու մասին] // Տեղեկագիր: Դաս. գիտ. / ՅՍՍՌ ԳԱ. – 1953. ք. 6. - էջ 30 – 31:

122. Սեմյոնով Լ.

Ամանոր [Եան՝ Անանիա Շիրակացու «Տիեզերագրություն և տոմար» աշխատության մասին] // Էջմիածին. – 1953. – հունվար. - էջ 25-30. - (Պատմա - բանասիրական):

123. Սեմյոնով Լ.

Անանիա Շիրակացին որպես աստղաբաշխ // Ջարթոնք. - Բեյրութ, 1953. – ք. 33. – 3 նոյեմբ. - էջ 2, լուսանկ.: ք. 34. – 4 նոյեմբ. - էջ 2 ; ք. 35. – 5 նոյեմբ. - էջ 2. - (Դայ մեծ գիտնական):

124. Սեմյոնով Լ.

Անանիա Շիրակացին որպես աստղաբաշխ // Էջմիածին. – 1953. – հուլիս-օգոստոս. - էջ 22-25:

1954

125. Դակոբյան Թ.Խ.

Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացույց»- ի մասին: [Անանիա Շիրակացու] // Գիտ. աշխատություններ / Երևանի Վ.Ս.Մոլոտովի անվ. համալս., աշխարհագր. գիտ. սերիա, 1954. – պրակ 1. – հտ. 43. - էջ 116-149: Ամփոփ. ռուս.:

126. Սեմյոնով Լ.

Լուսնի տեսանելի շարժումը: [Եան՝ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն և տոմար» աշխատության մասին] // Էջմիածին. – 1954.

– ք. 12. - էջ 35-38:

127. Սենյոնով Լ.

Վերադրաց շրջան: [Լուսնի օրը որոշելու կանոնների ստեղծման գործում նաև Անանիա Շիրակացու ներդրման մասին] // Էջմիածին. – 1954. – ք. 1 - էջ 27-31:

1955

128. Աբրահամյան Աշ.

Եօթներորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացի: [Կյանքը և գործունեությունը] // Աբրահամյան Աշոտ: Եօթ դասախոսություններ: (Հայագիտական). - Անթիլեաս-Լիբանան, 1955 - էջ 38-58; Էջմիածին. – 1955. – օգոստոս. - էջ 40-47; սեպտեմբեր. - էջ 43-49; Հասկ. - Բեյրութ, 1955.- ք.1. – յունուար. - էջ 93-97:

129. [Ազատյան Թ.]

Անանիա Շիրակացի // Ջարթօնք. - Բեյրութ. – 1955. – ք. 159. – 5 ապր. - էջ 2; ք. 160. – 6 ապր. - էջ 2. - (Մեր մատենագետները):

130. Առաքելյան Առաքել

Անանիա Շիրակացի // Գիտական աշխատությունների ժողովածու / Հայկ. ՍՍՌ Խ.Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկավարժ. ինստ. – 1955. – ք. 4. - էջ 23-52:

131. Լափաճյան Սեդրակ

Անանիա Շիրակացիի տոմարագիտական աշխատությունները // Հասկ. - Բեյրութ. – 1955. – թիվ 1. - էջ 21-25, ք. 2.- էջ 58-64:

132. Սենյոնով Լ .

Աստղաբաշխական երկրաչափություն: [Անանիա Շիրակացին որպես աստղաբաշխ] // Էջմիածին 1955. – ք. 1. – էջ 29-34:

1956

133. Ակիմեան Հ. Ն.

Դավիթ Անյաթ եւ Դավիթ Հարքացի: Յունաբան դպրոցի թարգմա-

նիչներն ըստ հայ աւանդութեան ու Ջ. - Է. դարու Դաւիթ Իմաստասէրները [Նաև՝ Անանիա Շիրակացու «Մատենագրութիւն»-ից մի հատված՝ ուղղված ժամանակի մոլեռանդներին («Ոչ ոք եղև շնորհակալ եւ մեշարող իմոյ աշխատութեան, քանզի եւ ոչ սիրող իսկ է ազգ մեր իմաստից եւ գիտութեանց, այլ ծոյլք են եւ ձանձրացողք») ներկայացվելու մասին] // Յանդէս ամսօրեայ. – Վիեննա, 1956. – ք. 7-8. - էջ 301-320:

134. Հակոբյան Թ.Խ.

Հայկական լեռնաշխարհի բնությունն ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»- ի // Գիտական աշխատություններ / Վ.Մ. Մոլոտովի անվ. Երևանի պետ. համալս. – 1956. – Հտ. 58: Աշխարհագրական գիտությունների սերիա: Պր. 3. - էջ 3-21: Ամփոփ.՝ ռուս.:

1957

135. Եզանյան Ա.

XIX դարի մի քանի հայ մաթեմատիկոսների մասին [Նաև՝ Անանիա Շիրակացու] // Գիտական աշխատութ. ժողովածու / Հայկ. պետ. հեռակա մանկ. ինստ. – 1957. – ք. 4. – պրակ. 1 - էջ 65-104:

136. Խրլոպյան Գ.

Անանիա Շիրակացի: (Մանկավարժական հայացքների մասին) // Սովետ.Մանկավարժ. – 1957. – ք. 12. - էջ 22-28:

137. Նավասարդյան Ա.

Անանիա Շիրակացի // Սովետ. դպրոց. – 1957. – ք. 11. – 14 մարտի. - էջ 4, լուսանկ.:

1959

138. «Անանիա Շիրակացի» [վերնագրով աշխատությունը Ա. Աբրահամյանի; Բ.Ե. Թումանյանի; Ստ.Սելիք Բախշյանի հեղինակությամբ լույս ընծայվելու մասին] // Անդաստան. - Փարիզ. – 1959. - ք. 10. - էջ 201.- (Գրքեր):

139. «Անանիա Շիրակացի» [Իվան Յակովլևիչ Դեպմանը 1954թ.

Լենինգրադում հրատարակած «Պատմվածքներ մաթեմատիկայի մասին» իր գրքում՝ Անանիա Շիրակացու վերաբերյալ // Անդաստան. - փարիզ, 1959. - ք. 10. - էջ 201. - (Գրքեր):

140. Անասյան Հակոբ

Անանիա Շիրակացի: [Կյանքը և ստեղծագործությունը] // Անասյան Յ.Ս. Հայկական մատենագրություն: Հտ. Ա. - Ե., 1959. - էջ 731-774:

141. Խրլոպյան Գ.

Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայացքները // Պատմա-բանասիր. հանդես. - 1959. - ք. 2 - 3. էջ 131-148: Ամփոփ.՝ ռուս.:

142. Խրլոպյան Գ. Տ.

Շիրակացու իմացաբանական հայացքները // Տեղեկագիր հաս. գիտ. / ՅՍՍՌ ԳԱ - 1959. - ք. 7. - էջ 47-60:

143. Համամիութենական կոնֆերանս: [Մոսկվայում տեղի ունեցած բնական գիտությունների և տեխնիկայի պատմության կոնֆերանսում նաև՝ Ա. Աբրահամյանի՝ « VII դարի մշակման գիտնական Անանիա Շիրակացու նորահայտ աստղագիտական աղյուսակները» թեմայով զեկուցման մասին] // Երևան. - 1959. - ք. 116. - 13 հունիսի - էջ 3

144. Միքայելեան Վ.

Անանիա Շիրակացի: Միջնադարի մեծ գիտնականը // Ջարթօնք. - Բեյրութ. - 1959. - ք. 68. - 15 դեկտ. - էջ 2, 4:

145. Միքայելեան Վ.

Միջնադարի մեծ գիտնականը [Անանիա Շիրակացու մասին] // Լրաբեր. - - Նիւ-Յորք, 1959. - ք. 46. - 27 հոկտ. - էջ 1 - 2; Երևան. - Սոֆիա, 1959. - ք. 50. - 6 նոյեմբ. էջ 3, ք. 51. - 7 նոյեմբ. - էջ 3:

1960

146. Աբրահամյան Ա.Գ.

Շիրակացու աստղագիտական նորահայտ աղյուսակները // Բնագիտ. և տեխնիկայի պատմությունից / Գիտ. աշխատ. ժողովածու. - 1960. - ք. 1. - էջ 50-73: Ամփոփ.՝ ռուս.:

147. Թահմիզյան Ն.

Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսությունից [Անանիա Շիրակացու համամասնությունների տասնակարգյան աղյուսակի մասին] // Բանբեր Մատենադարանի. – 1960. – թ. 5. – էջ 43-76: Ամփոփ.՝ ռուս.:

Բովանդ.-ից՝ Տասնակարգյան աղյուսակը ծանոթ էր արդյոք վաղ միջնադարյան հայ գիտնականներին

1961

148. Կիրակոս Գանձակեցի

Կիրակոս վարդապետին համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցյետին աւուրս թեւացեալ: Համառօտ պատմութիւն և ցոյցք անուանց սրբոյն Գրիգորի և որք յետ նորա յաջորդեցն զաթոռ նորա: [Նաև՝ Անանիա Շիրակացու տոմարական արվեստի մասին] // Կիրակոս Գանձակեցի. Պատմություն հայոց: - Ե., 1961. - էջ 10-120:

1962

149. Աբրահամյան Ա.Գ.

Անանիա Շիրակացու Լուսնի պարբերաշրջանների աղյուսակները; - Անանիա Շիրակացի // Անանիա Շիրակացու Լուսնի պարբերաշրջանները. - Ե., համալս., 1962, էջ 29-52:

150. Եզանյան Ա.Մ.

«Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը» // Տեղեկագիր / Հայկակ. հեռակա Մանկավարժ. ինստ. – 1962. – թ.1. – էջ 159-188: Ամփոփ.՝ ռուս.:

1963

151. Անանիա Շիրակացի: [Կենսագրություն]; Անանիա Շիրակացու երկերը: «Ի յայտնութիւն Տեառն եւ փրկչին մերոյ»; «Ի զատիկն Տեառն»; «Յաղագս կշռոյ եւ չափուց»; «Յաղագս հարցման եւ լուծման»; «Առ խոստացեալն»; «Աշխարհացոյց»; Անանիա Շիրակացու երկերի արժեքը // Պատմութիւն հայ մատենագրութեան: Նախաքրիստոնէա-

կան շրջանից մինչև ժ դար: Ա. մաս. (Բ.հրատ.). – Թեհրան, 1963. – էջ 87-93:

152. Սաաթճեան Նշան Պ.

Անանիա վարդապետ Շիրակացի // Չարթօնք. - Բեյրութ, 1963. – ք. 74. – 21 դեկտ. - էջ 2:

1964

153. Աբրահամյան Ա.Գ.

Անանիա Շիրակացու Լուսնի պարբերաշրջանների աղյուսակները; - Անանիա Շիրակացի // Անանիա Շիրակացու Լուսնի պարբերաշրջանները. - Ե.: Երևանի պետ. համալս., 1962.- էջ 29-52:

154. Բարթիկյան Հրաչ

Արատոս Սոլացու ԱՅԿՈՒՆԻ ԱՅԿ կամ ՃՆԻ ՆՉՕՕՅԵԱ աշխատության հին հայերեն թարգմանությունը [Աշխատության հունարեն չափածո բնագիրը և հին հայերեն արձակ թարգմանությունը՝ «Անանիայի Շիրակայնույ համարողի յաղագս ամպոց եւ նշանաց»-ը վերնագրով. ներկայացվելու, Շիրակացուն վերա գրվող երկի հեղինակ Արատոս Սոլացուն համարելու մասին] // Բանբեր Մատենադարանի. – 1964. – ք. 7. - էջ. 331-363. - Ամփոփ.՝ ռուս., անգլ.

155. Չալոյան Վ. Կ.

Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայացքները // Բնագիտ. և տեխնիկայի պատմությունից. – 1964. – ք. 3. - էջ 142-171: Ամփոփ.՝ ռուս.:

156. Սարուխանյան Ս.

Անանիա Շիրակացու ժամանակն ու մանկավարժական գործունեությունը // Ուսանողական գիտ. տեղեկագիր (Եր. պետ. համալս.). – 1964. – N 10. – պր. 1. - էջ 16-21:

1965

157. Աբրահամյան Ա. Գ.

Անանիա Շիրակացի // Բանվոր. – Լենինական, 1965. – ք. 284. – 2 դեկտ. - էջ 3:

158. Արահամյան Ա. Գ.

Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացի // Հասկ. - Բեյրութ. - 1955. - թիվ. 1. - էջ 17-20. թիվ 2. - էջ 53-57. թիվ 3. - էջ 93-97:

159. Մուրադյան Ա.

Անանիա Շիրակացու բնագիտական հայացքները // Գիտ. տեղեկագիր (Երևանի պետ. համալս.): Պատմա-փիլիսոփայական գիտ. սերիա, Հտ. 96, պր. 8. - 1965, էջ 77-84:

160. Սաաթեան Նշան Պ.

Անանիա Շիրակացի // Ջարթօնք. - Բեյրութ., - 1965. - թ. 1. - 12 փետր. - էջ 2. - (Միջնադարեան գիտուն կղերներ):

1966

161. Արզարյան Գ. Վ.

Անանիա Շիրակացի // «Հայրենիքի ձայն».- 1966.- 1 հունվ., թ. 1.- էջ 7-8:

162. Խրլոպյան Գևորգ

Հայ բնագիտության հայրը: [Անանիա Շիրակացի] // Երևան .Սոֆիա / 1966.- թ. 25.- 24 հունիսի. - էջ 2-3:

163. Խրլոպյան Գևորգ

Հայ բնագիտական մտքի ռահվիրան: [Անանիա Շիրակացու մասին] // Գիտություն և տեխնիկա. - 1966. - թ. 1.- էջ 45-49:

164. Խրլոպյան Գևորգ

Փիլիսոփան, մաթեմատիկոսը, աստղագետը, աշխարհագրագետը: [Անանիա Շիրակացու մասին] // Հայաստանի արդյունաբերություն - 1966. - թ. 11. - էջ 78-80:

165. Շտիկյան Ա.

Պատկանյալների տոհմաժառը: [Նաև՝ Քերովբե Պատկանյանը՝ որպես Անանիա Շիրակացու տեքստերի գիտական հրատարակիչ և թարգմանիչ (հայերենից ռուսերեն և հայերենից ֆրանսերեն), ներկա-

յացվելու մասին] // Լրաբեր. հաս. գիտ. – 1966. – ք. 8. - էջ 108-112:

1967

166. Բարթիկյան Հրաչ

Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը // Բանբեր մատենադարանի. – 1967. – ք. 8. - էջ 57-77: Ամփոփ.՝ ռուս., ֆրանս.:

1968

167. Աբրահամյան Ա.Գ.

Հայրենի բնագիտության նախահայրը: [Անանիա Շիրակացու մասին] // Լենինյան ուղիով. – 1968. – ք. 8. - էջ 86-94:

168. Թումանյան Բ. Ե.

Տոմարական հարցեր // Հայոց աստղագիտության պատմություն: (XIXդ սկզբից մինչև 1920թ.). - Ե., 1968. - էջ 9-33:

Բովանդ.-ից՝ Հայոց Մեծ և Փոքր թվականների տարեսկզբի հարցի շուրջը: [Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի կարծիքը Անանիա Շիրակացու կազմած տոմարի անշարժության մասին և հռոմեական անշարժին զուգահեռ Անաստաս կաթողիկոսի առաջարկությամբ Անանիա Շիրակացին 532-ամյա աղյուսակ կազմելու մասին]:

169. Խաչատրյան Մ. Մ

VII դարի «Աշխարհացոյցի» մասին // Պատմա-բանասիր. հանդես. – 1968. – ք. 4.- էջ 81 – 99 քարտով: Ամփոփ.՝ ռուս.:

Բովանդ.-ից՝ [Ս.Երեմյանի, Ա.Աբրահամյանի, Թ.Հակոբյանի կարծիքների մասին]; Ուսումնասիրելիք նյութի աղբյուրների հարցը; Երկրի ձևի հարցը; Արեգակի, Երկրի և լուսնի համեմատական մեծության հարցը; Ծովի ու ցամաքի փոխաբերության հարցը; Կասպիցն և Մեռձյալ ծովերի հարցը; Տարվա եղանակների և կլիմայական գոտիների հարցը; Անկյանք ծովի մասին; Երկնային սֆերայի կառուցվածքի հարցը; Հակոտնյանների հարցը; [Անանիա Շիրակացու տեսակետների վերլուծություն]:

1969

170. Աբրահամյան Ա. Գ.

«Աշխարհացոյց»- ի հեղինակի պրոբլեմը [Անանիա Շիրակացու հեղինակության հետ կապված փաստեր, ապացույցներ ներկայացնելու մասին] // Պատմա-բանասիր. հանդես.- 1969. – ք. 3. - էջ 226-240: Ամփոփ.՝ ռուս.:

171. Աբրահամյան Ա. Գ.

«Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը. [Սաթեմատիկոս Անանիա Շիրակացի] // Պատմա-բանասիր. հանդես. – 1969. – ք. 3. - էջ 226-240:

Անդրադարձ Մ.Մ.Խաչատրյանի «Վողարի Աշխարհացոյցի մասին» խորագրով // Պատմա-բանասիր. հանդես. – 1968թ. – ք. 4-ում հրապարակված հոդվածին:

172. Գանին Ժ.

Անանիա Շիրակացու տեղայնացման մեթոդը // Սովետ. մանկավարժ. – 1969. – ք. 4 - էջ 77-79:

1971

173. Աբգարյան Գ.Վ.

Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանակաց» աշխատության մասին: [1869թ. երկը հայտնաբերել և հրատարակել է Գ. Տեր-Մկրտչյանը] // Պատմա-բանասիր. հանդես. – 1971. – ք. 1. - էջ 77-94: Ամփոփ.՝ ռուս.:

174. Բարթիկյան Ջ.Ս.

Դարձյալ Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին [բանավեճ Գ.Աբգարյանի հոդվածի շուրջը]: // Պատմա-բանասիր. հանդես, - 1971.- ք. 4.- էջ 133-150: Ամփոփ.՝ ռուս.:

175. Դանիելյան Է.Լ.

Արիստոտելի տարրերի տեսությունը և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը» // Պատմա-բանասիր. հանդես. – 1971. – ք. 2. - էջ 217-222:

176. Թումանյան Բ. Ե.

[Անանիա] Շիրակացուն վերագրվող երկու աշխատության մասին // Պատմա-բանասիր. հանդես. – 1971. – ք. 3. - էջ 203-209: Ամփոփ.՝ ռուս.:

177. Թումանյան Բ.Ե.

Շիրակացու 532-ամյա աղյուսակը և հայկական տոմարը // Պատմա-բանասիր. հանդես. – 1971. – ք. 1. - էջ 188-193:

178. Խաչիկյան Լ. Ս.

Չայ բնագիտական միտքը 14- 18-րդ դարերում: [Նաև՝ Անանիա Շիրակացու դերը] // Պատմա-բանասիր. հանդես.- 1971.- ք. 2.- էջ 23-43:

179. Մուրադյան Կ.Ս..

Բարսեղ Կեսարացու «Վեցաիրեայի» [հայերեն թարգմանությունը] և Անանիա Շիրակացու որոշ երկերի տեքստաբանական առընչությունը // Լրաբեր հաս. գիտ. – 1971. – ք. 3. - էջ 99-107: Ամփոփ.՝ ռուս.:

180. Պետրոսյան Գ. Բ.

«Աշխարհացոյց»-ի հեղինակի առեղծվածը: [Անանիա Շիրակացուն հեղինակ համարելու մասին] // Լրաբեր հաս. գիտ. – 1971. – ք. 10. - էջ 54-60: Ամփոփ.՝ ռուս.:

1972

181. Աբգարյան Գ. Վ.

Արատոս Սղւացու ԱՅԹՃ Ի ԱՅԹ աշխատության կարծեցյալ թարգմանության մասին [Անանիա Շիրակացուն վերագրելու մասին] // Պատմա-բանասիր. հանդես. – 1972. – ք. 4. - էջ 184-199: Ամփոփ.՝ ռուս.:

182. Աղամյան Ս. Գ.

Գալուստ Տեր-Սկրտչյանի արխիվը: [Նաև՝ նշանավոր հայագետը «Արարատ» հանդեսում Միաբան ծածկանունով «Անանիա Շիրակացի» վերնագրով հոդված հրապարակելու մասին] // Լրաբեր հաս. գիտ. – 1972. – ք.6. - էջ 103-104:

183. Անանիա Շիրակացի: [Անանիա Շիրակացի «Աշխարհացոյց»-

ի բնագրից] // Պատմա-բանասիր. հանդես. – 1972.- ք.4. - էջ 211-230. - (Հրապարակումներ):

184. Գյուլբուղայան Ա. Վ.

X-XVII դդ. հայերենի ձայնավորների ուղղագրությունը: [Եան՝ Մատենադարանի N 2679 ձեռագրի (Շիրակացի, 981թ.)25-րդ էջում՝ Կոստանդնուպոլսի, 48 Բ-ում՝ Կոստանդնուպալուսի գրված լինելու մասին] // Լրաբեր հաս. գիտ. – 1972. – ք. 4. - էջ 51-63

185. Երեմյան Ա. Տ.

«Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ [Անանիա Շիրակացու աշխատության հրապարակման մասին] // Պատմա-բանասիր. հանդես. – 1972. – ք. 4. - էջ 209-230:

186. Հայկական մաթյան մը Պրատիսլավիայեն: [Սլովակիայի մայրաքաղաքում հայտնաբերված Անանիա Շիրակացու 16-րդ դ. «Աշխարհագրություն և հայկական առասպելներ» գրքի մասին] : Ստորագր.՝ Թղթակից: // [«Զարթոնք» - Բեյրութ, 1972], 17 հոկտ., ք. 19, էջ 2:

187. Պետրոսյան Գ.Բ.

«Մղոնաչափք» և «Աստղաբաշխական երկրաչափություն» աշխատությունների հարցի շուրջ [Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի մաս կազմելու հետ կապված Հ.Մանանդյանի; Մ.Խաչատրյանի և Բ.Թումանյանի արտահայտած տեսակետների մասին] // Պատմա-բանասիրական հանդես. – 1972. – ք. 4. - էջ 200-208: Ամփոփ.՝ ռուս.:

1973

188. Ղազարյան Կ. Ս.

Անանիա Շիրակացու «Աստղաբաշխական երկրաչափության» մասին // Գիտական տեղեկագիր: Բնական գիտ. / Երևանի Պետ.համալս. – 1973. – ք. 1 - էջ 134-136: Ամփոփ.՝ ռուս.:

1974

189. Աբրահամյան Ա., Թահմիզյան Ն.

Անանիա Շիրակացի: [VII դարի հայ գիտնականի կյանքը և գործու-

ներթյունը] // Հայկական սովետական հանրագիտարան: Հտ.1.- Ե., 1974. - էջ 362-364:

190. Հեքեքյան Ռ.Վ., Ղազարյան Կ. Ա.

Անանիա Շիրակացու աշխատանքները աստղագիտության և ֆիզիկայի վերաբերյալ // Մաթեմատիկական և ֆիզիկական դպրոցում «Սովետ. մանկավարժ» ամսագրի հավելված. – 1974. – ք. 2. - էջ 62-63:

191. Մաթևոսյան Ա. Ս.

Անանիա Շիրակացու «Քննիկոն»-ը [Անաստաս կաթողիկոսի պահանջով ստեղծված գիտական հարուստ բովանդակությամբ աշխատության մասին] // Լրաբեր հաս. գիտ. – 1974. – ք. 7. - էջ 65-78; ք. 8. - էջ 71-81. - Ամփոփ.՝ ռուս.:

192. Մաթևոսյան Ա.Ս.

Նորահայտ պատառիկներ Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքից [Վերլուծություն]: // Լրաբեր հաս. գիտ. – 1974. – ք. 6 - էջ 65-76: Ամփոփ.՝ ռուս.

193. Օդաբաշյան Ա.Ա.

Նավասարդյան տոնախմբությունների վերապրուկները [Նաև՝ Անանիա Շիրակաց «Տիեզերագիտություն և տոմար» աշխատությունում] // Պատմա-բանասիրական հանդես. – 1974. – ք. 3. - էջ 113-126: Ամփոփ.՝ ռուս.:

1975

194. [Բարսեղ] Կեսարացու «Վեցօրեան» [Անանիա] Շիրակացու տիեզերագիտական աշխատությունների աղբյուր: [Հրատ. ու առաջաբ. Կ.Ս.Մուրադյանի] // Լրաբեր հաս. գիտ. – 1975. – ք. 3. - էջ 95-114: Ամփոփ.՝ ռուս.:

195. Մուրադյան Կ. Մ.

Ընդհանուր հատվածներ ու սրբագրություններ Կեսարացու և Շիրակացու գործերում // Լրաբեր հաս. գիտ. – 1975. – ք. 1. - էջ 55-72: Ամփոփ.՝ ռուս.:

1976

196. Աբրահամյան Ա. Գ.

Անանիա Շիրակացի: [Կյանքը և գործունեությունը] // Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր. - Ե., 1976. - էջ 111-124:

197. Թումանյան Բ.; Ղազարյան Կ.

Տիեզերքի կառուցվածքը ըստ Անանիա Շիրակացու // Բանբեր Երևանի համալս. - 1976, թ. 3. - էջ 34-43: Ամփոփ.՝ ռուս.:

198. Մկրյան Մ. Մ.

Հայ գրականությունը 6-9րդ դարերում: [Նաև՝ Անանիա Շիրակացու աշխատությունները իր ժամանակի գիտության բոլոր ճյուղերին (պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, աստղագիտություն, տոմարագիտություն և այլն) վերաբերելու մասին] // Մկրյան Մ. Մ. Հայ հին գրականության պատմություն (V-X դարեր): Ե., 1976. - էջ 267-281:

199. [Անանիա Շիրակացու խոսքը: (Շատ փափագելով թվաբանության արվեստին, մտածեցի, որ ոչ մի բան չի կարգավորվում առանց թվերի. համարելով (թվաբանությունը) բոլոր գիտությունների մայրը)] // Հայրենիքի ձայն. - 1977. - թ. 22. - 1 հունիսի. - էջ 4; էջմիածին - թ. 7. - էջ 53-54:

Ամփոփ.՝ ռուս.; ֆրանս.:

1977

200. Դավիթիանի Արչիլ

Բարեկամության զուգահեռականներում: [Հոդվածներ]. - Թբիլիսի, «Սաքճոթա Սաքարթվելո», 1977. - 213 էջ:

Բովանդ.-ից՝ էջ 189 - 193. - Հայկական ձեռագրերը պատմում են Թբիլիսիի մասին [Անանիա Շիրակացի, Կիրակոս Գանձակեցի, Մատթեոս Ուռեայեցի]:

201. Դրյուբին Վ.

Վարդապետի կյանքի բանաձևը [Նաև՝ 1918թ. Պետրոգրադում Հ.Օրբելու թարգմանությամբ «7-րդ դարի հայ մաթեմատիկոս Վարդա-

պետ Անանիա Շիրակացու հարցերը և լուծումները» գրքույկի հրատարակության մասին] // Չայրենիքի ձայն. – 1977. – ք. 22, - 1 հունիսի. - էջ 4: Էջմիածին. – ք. 7 - էջ 53-54: Ամփոփ.՝ ռուս., ֆրանս.:

202. Խնդիր Շիրակացու դասագրքից // Չայրենիքի ձայն. - 1977. – ք. 22. – 1 հունիսի, - էջ 4.: Էջմիածին. – ք. 7. - էջ 53-54: Ամփոփ.՝ ռուս.; ֆրանս.:

1978

203. Էյնաթյան Ջ. Ա.

Տոմարական երկու հարց Չակոբ Ղրիմեցու աշխատություններում [Նաև՝ Ադամից Քրիստոս ընկած ժամանակահատվածի վերաբերյալ Անանիա Շիրակացու ժամանակագրության մասին] // Պատմա-բանասիր. հանդես. – 1978. – ք. 1. - էջ 115-124: Ամփոփ.՝ ռուս.:

1979

204. Երնջակյան Նվարդ

Լուսինը հայ ժողովրդական հավատալիքներում և սովորույթներում: (XIX դ. վերջ - XXդ. սկիզբ) [Նաև՝ ըստ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գրքի] // Լրաբեր հաս. գիտ. – 1979. – ք. 2. - էջ 53-60: Ամփոփ.՝ ռուս.:

205. Թումանյան Բ.

Անանիա Շիրակացու տիեզերագիտական հայացքները // Սովետ. Չայաստան. – 1979. – ք. 1. - էջ 26-27:

206. Մաթևոսյան Արտաշես

Անանիա Շիրակացու «Աշխարհագրութեան» հետ կապված մի քանի հարցեր: [Կլավդիո Պտղոմեոսի, Պապոս Աղեքսանդրացու, Չիպոլիտոս Բոստրացու երկերից հատվածներ օգտագործելու մասին] // Լրաբեր հաս. հիտ. – 1979. – ք. 9. - էջ 78-86: Ամփոփ.՝ ռուս.:

207. Մաթևոսյան Ա. Ս.

Անանիա Շիրակացու «Քննիկոն»-ի երկրաչափության բաժինը // Պատմա-բանասիր. հանդես. – 1979. – ք. 2. - էջ 163-178: Ամփոփ.՝ ռուս.:

208. Պետրոսյան Գ. Բ.

VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ի մասին // Պատմա-բանասիր. հանդես. – 1979. – ք. 2. – էջ 241-246: Ամփոփ.՝ ռուս.:

209. Տվորաշեք Մարիա

Բանախոսություն Անանիա Շիրակացիի մասին [1979թ. ապրիլի 5-ին Ռուսիայի Արևելագիտության ընկերության Յաշի մասնաճյուղի նիստում պրոֆ. դոկտ. Ֆլորիք Թ.Քընփանը «Անանիա Շիրակացի. VII դարի հայ ուսողագետ» թեմայով դասախոսությամբ հանդես գալու մասին] // Նոր կյանք. - Բուխարեստ, 1979. – ք. 18. – 4 մայիսի. - էջ 2, լուսանկ. (Մշակույթ - արվեստ - գիտություն):

210. Քընփան Թ. Ֆլորիքա

[Հատված՝ 1979թ. ապրիլի 5-ին Ռուսիայի Արևելագիտության ընկերության Յաշի մասնաճյուղի նիստում «Անանիա Շիրակացի VII դարի հայ ուսողագետ» թեմայով դասախոսությունից] // Նոր կյանք. - Բուխարեստ, 1979. – ք. 18. – 4 մայիսի. - էջ 2, լուսանկ. (Մշակույթ - արվեստ - գիտություն):

1980

211. Ազրոյան Լևոն

Շիրակացու «Քննիկոնի» առեղծվածը [Արտաշես Մաթևոսյանի ուսումնասիրության մասին] // Ավանգարդ. – 1980. – ք. 55. – 7 մայիսի. - էջ 4:

212. Անանիա Շիրակացին՝ աշխարհաբար [«Մատենագրություն» աշխատության հրատարակության մասին] // Ավանգարդ. – 1980. – ք. 25. – 27 փետր. - էջ 4; Սովետ. Հայաստան. – 1980. – ք. 61. - 11 մարտի. - էջ 4:

213. Բակշի Կիմ

Սեղանին վառվում էր մոմը...: Թանկարժեք սերմեր: [Նաև՝ Անանիա Շիրակացու «Թվաբանություն»-ը դասագրքի մասին] // Բակշի Կիմ. Արժիվ և սուր. - Ե., 1980. - էջ 5-34:

214. Հակոբյան Գ. Ա.

Անանիա Շիրակացի [VII դարի շարականագիր համարվելու մա-

սին] // Հակոբյան Գ.Ա. Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ: (V – XVդդ). Ե., 1980. - էջ 134-138:

215. Հրաչյան Մ.

«Անանիա Շիրակացի» [Եան՝ հայտնի մաթեմատիկոս Յ.Դեպանը Անանիա Շիրակացու մասին] // Երեկոյան Երևան.– 1980. – ք. 50. - էջ 3

216. Պետրոսյան Գ. Բ.

Անանիա Շիրակացու «Քննիկոն»-ը // Պատմա-բանասիրական հանդես. – 1980. – ք.2. - էջ 222-220: Ամփոփ.՝ ռուս.:

217. Վարդանյան Ն.

Մշակութային և հասարակական կյանքը սփյուռքում (1979թ. հունվար-դեկտեմբեր) [Եան՝ ապրիլի 5-ին Ռումինիայի Արևելագիտության ընկերության Յաշի մասնաճյուղի նիստում պրոֆ. դոկտ. Ֆլորիքա Թ.Քընփանը « Անանիա Շիրակացի. VII դարու հայ ուսողագետ» թեմայով դասախոսությամբ հանդես գալու մասին] // Պատմա-բանասիր. հանդես. – 1980. – ք. 1. - էջ 271-277:

1981

218. Առաքելյան Վ. Դ.

Անանիա Շիրակացի. Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ. Աբրահամյանի և Գ.Բ. Պետրոսյանի, Երևան, 1979: [«Հայ մատենագիրներ» մատենաշարով առաջին անգամ աշխարհաբարով հրատարակված գրքի թարգմանությունը գիտական պահանջներին չբավարարելու մասին] // Պատմա-բանասիր. հանդես. – 1981. – ք. 4. - էջ 295-300:

219. Բարթիկյան Հ. Մ.

Հունական «Հիդիրիա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին // Պատմա-բանասիրական հանդես. – 1981. – ք. 2. - էջ 290-299:
Բովանդ.-ից՝ Հտ. 6 [Եան՝ Անանիա Շիրակացու մասին]:

220. Մաթևոսյան Ա.Ա.

Նորից Շիրակացու «Քննիկոն»-ի մասին: [Բանավեճ «Պատմա-բանասիր. հանդես» 1980թ. ք.2-ում տպագրված Գ. Պետրոսյանի «Անանի-

ա Շիրակացու «Քննիկոն»-ը հողվածի առթիվ» // Պատմա-բանասիրական հանդես. – 1981. – ք. 2. - էջ 223-239: Ամփոփ.՝ ռուս.:

221. Պետրոսյան Գ.

Անանիա Շիրակացու թվաբանական աղյուսակների մասին // Լրաբեր. – հաս. գիտ. – 1981. – ք. 6. - էջ 78-85:

1982

222. Ադամեան Մանուէլ

Անանիա Շիրակացի (հայ առաջին բնագետ փիլիսոփան) // Արարատ. - Բեյրութ, 1982. – ք. 1. 1942. – 3 ապր. էջ 2. - (արժեքներու վերագնահատում):

1983

223. Անանիա Շիրակացի

(Սատենագրութիւն հայոց) [Կյանքը և ստեղծագործությունը] / Քաղեց և համադրեց՝ Յակոբ Աղայեան // Արարատ. - Բեյրութ, 1983. – ք. 12320. – 14 օգոստ. - էջ 3-4:

224. Միրզոյան Հրաչյա

Գիտության անխոնջ մշակը: [Սեն Արևշատյանը նաև Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն» աշխատությունների թարգմանության մասին] // Գարուն. – 1983. – ք. 5. - էջ 61-62:

225. Պետրոսյան Գ. Բ.

Նորից Անանիա Շիրակացու «Քննիկոն»-ի մասին // Պատմա-բանասիր. հանդես. – 1983. – ք. 4. - էջ 131-137. - Ամփոփ.՝ ռուս.:

226. Սիմոնյան Կարեն

Անանիա Շիրակացի // Լրաբեր. – Լոս Անջելես, 1983. – ք. 36. – 11 յունիսի. - էջ 5. - (Հոգևոր կանուրջներ):

1984

227. Ալեքսանդրոպուլոս Միցոս

Մատենադարան: [Նաև՝ ճշգրիտ գիտությունների հանրագիտակ

Անանիա Շիրակացին Տրապիզոնում մաթեմատիկոս Տյուքիկոսի մոտ ուսանելու մասին] // Ալեքսանդրոպոլիս Միցոս. Հայերը. - Ե., 1984. - էջ 123-134:

228. [Անանիա Շիրակացու պատմածը իր հույն ուսուցիչ, մաթեմատիկոս Տյուքիկոսի մասին] // Ալեքսանդրոպոլիս Միցոս – Հայերը. - Ե., 1984. - էջ 194:

229. Թահմիզյան Ե.

Անանիա Շիրակացին և Հարության ԱԶ-ԴԿ ութ հարցնակարգերը [և Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի կանոնների երգերը՝ որպես բանաստեղծ - երաժիշտ, հեղինակելու մասին] // Էջմիածին. – 1984. – ք. Ե. - էջ 25-35:

230. Մալխասյանց Ստեփան

